

ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԿՐՈՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Այսու ուրախ ենք վկայելու, որ ընթացք տալով Մայր Աթոռիս 3 նոյեմբեր 1990 թ. հաղորդագրությանը Երևանում Քրիստոնեական Քարոզչության Կենտրոնի հաստատման մասին, սույն կենտրոնը արդեն իսկ սկսել է ծավալել իր գործունեությունը: Կենտրոնի ամենահրատապ առաջադրանքներից մեկն է պատրաստել բավարար թվով ուսուցիչներ՝ միջնակարգ դպրոցներում կրոն դասավանդելու համար:

Այս նպատակով Երևանի Ս. Սարգիս եկեղեցու առաջնորդարանում ըսկըսվեցին կրոնական դասընթացքներ, որին մասնակցում են միջնակարգ դպրոցների շուրջ 200 ուսուցիչ-ուսուցչուհիներ: Դասավանդություններին ավանդվում են Ս. Գիրք, Հին և Նոր Կտակարաններ, Քրիստոնեական, Հայ Եկեղեցու պատմություն, Ընդհանուր Եկեղեցու պատմություն և Ընդհանուր Աստվածաբանություն: Դասավանդում են Մայր Աթոռիս երիտասարդ վարդապետներ:

Նոյեմբերի 10-ին, շաբաթ օրը, դասընթացքներին հետևող խումբը այցելեց Վեհարան և հանդիպում ունեցավ Վեհափառ Հայրապետի հետ: Սրտի խոսքով հանդես եկան երկու ուսանողներ:

Վերջում օրհնության խոսքով հանդես եկավ Վեհափառ Հայրապետը, ողջունելով այդ հոգևոր ձեռնարկը: Այնուհետև խումբը այցելեց Մայր տաճար և ներկա եղավ Երեկոյան հոգեպարար ժամերգությանը: